



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3603-Ա

« 02 » սեպտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ներքին աուդիտի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման N 1 հավելվածի 27-րդ կետերի պահանջներով.

1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի որակի երաշխավորման և բերալավման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:



CSign

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը և դրա իրականացումը իրենից ենթադրում է ներքին աուդիտի գործառույթների համապատասխանությունը.

1) «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք),

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին (այսուհետ՝ Ստանդարտներ),

3) աուդիտորների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի կանոնների (այսուհետ՝ Վարքագծի կանոններ) պահպանումը,

4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 974-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» մեթոդական ցուցումներին,

5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկի և կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու մասին» ուղեցույցներին,

6) ներքին աուդիտի ոլորտին վերաբերող այլ իրավական և գերատեսչական նորմատիվ ակտերին (այսուհետ՝ Ներքին աուդիտի օրենսդրություն):

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը (այսուհետ՝ Որակի ծրագիր) թույլ է տալիս գնահատել Քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժնի (այսուհետ՝ Բաժին) բոլոր գործառույթների համապատասխանությունը ներքին աուդիտի Ստանդարտների և Վարքագծի կանոնների պահանջներին:

Որակի ծրագրի իրականացման արդյունքում գնահատվում է ներքին աուդիտի գործունեության որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև բացահայտվում են բարելավման հնարավորությունները և ներկայացվում համապատասխան առաջարկություններ որակի բարելավման ուղղությամբ:

Որակի երաշխավորման ընդհանուր գործընթացի ժամանակ հայտնաբերված հարցերը պետք է վերանայվեն, որպեսզի որոշվի, թե արդյոք անհրաժեշտ է.

- նորացնել կամ պարզաբանել ներքին աուդիտի ձեռնարկի, կանոնակարգի կամ ներքին աուդիտի ոլորտը կարգավորող այլ ակտերի բովանդակությունը,
- ուսուցանել կամ վերապատրաստել Բաժնի աշխատակիցներին՝ կատարելագործելով Բաժնի առանձին աշխատակիցների աշխատանքին առնչվող գիտելիքները և հմտությունները:

2. ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բաժնի պետը պատասխանատու է ներքին աուդիտի գործունեության ընթացքում ներքին աուդիտի ստանդարտներում նախատեսված բոլոր աշխատանքներին մասնակցելու և դրանք «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու համար: Այդ նպատակով վերջինս պետք է կազմակերպի և իր լիազորությունների շրջանակներում իրականացնի, ինչպես նաև աջակցի որակի ծրագրի իրականացմանը:

Որակի ծրագրի գնահատումների նպատակն է պարզել.

- Բաժնի գործունեության համապատասխանությունը Ներքին աուդիտի օրենսդրությանը և Վարքագծի կանոններին՝ ներառյալ անհամապատասխանության նշանակալի դեպքերի վերաբերյալ ժամանակին ձեռնարկված կանխարգելիչ քայլերը,
 - Ներքին աուդիտի կանոնակարգի, Բաժնի նպատակների, խնդիրների, քաղաքականության և ընթացակարգերի լիարժեքությունը,
 - Ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը,
 - Քաղաքապետարանի ամբողջ համակարգի (Քաղաքապետարանի աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները, ռեսուրսները, ծառայությունները, ծրագրերը և այլ իրավահարաբերություններից առաջացող խնդիրներ, որը սահմանված է Քաղաքապետարանի կանոնադրությամբ՝ (այսուհետ՝ Միավորներ)) գործունեության համապատասխանությունը՝ ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին,
 - Շարունակական բարելավման աշխատանքների արդյունավետությունը և իրականացված գործողությունների գնահատումը,
 - Բաժնի գործունեության հետևանքով ստացված Քաղաքապետարանի ամբողջ համակարգի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը:
- Որակի ծրագրի շրջանակներում Բաժնի իրականացման ենթակա գործառույթներն են.
- ներքին աուդիտի ընթացակարգերի իրականացման նկատմամբ վերահսկում,
 - աուդիտի հետ կապված ռիսկերի մասին գրանցումների վարում, այդ թվում՝ այդ ռիսկերի վրա ազդող նոր տեղեկատվության հավաքագրում, գնահատում և ներառում գրանցումներում,
 - ներքին աուդիտի ռազմավարական ծրագրերի կազմման ընդհանուր համակարգի վարում,
 - գնահատման և ուսումնասիրման գործառույթներում պարտականությունների բաշխման նկատմամբ վերահսկում,

- աշխատակիցների ուսուցման/վերապատրաստման աշխատանքների վերահսկում, աշխատանքային առաջխաղացման ծրագրի և կատարողականի գնահատման գործընթացների վերաբերյալ գրանցումների վարման համակարգի ստեղծում և կառավարում,
- աուդիտորական առաջադրանքների իրականացումից հետո կատարվող ուսումնասիրությունների նկատմամբ վերահսկում,
- որակի երաշխավորման և գործընթացների բարելավման աշխատանքների, այդ թվում՝ որակի ներքին գնահատումների դիտարկում և կառավարում,
- տեղեկատվության հավաքագրման, Քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող Բաժնի գործունեության պարբերական ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացի վերահսկում,
- ներքին և արտաքին աուդիտի, ինչպես նաև գնահատման ու դիտարկման ներքին այլ գործառույթների աշխատանքի արդյունքում ներկայացված առաջարկությունների և միջոցառումների իրականացման մասին համապարփակ տվյալների պահույցի վարում,
- աջակցություն Բաժնի աշխատակիցներին, որպեսզի վերջիններս տեղեկացված լինեն Ստանդարտներում կատարված փոփոխություններին, ներքին աուդիտի մասնագիտական նորամուծություններին ու փոփոխություններին:

Որակի ծրագիրն իրականացվում է ներքին և արտաքին գնահատման եղանակներով:

Ներքին գնահատման իրավասություն ունեն՝

- 1) Բաժնի պետը,
- 2) աշխատանքային խմբի ղեկավարը,
- 3) ներքին աուդիտորները՝ ինքնագնահատման ձևով:

Որակի ծրագրի գնահատումն իրականացվում է երեք եղանակով.

- 1) վերահսկման և ընթացիկ դիտարկման գործընթաց (մոնիթորինգ),
- 1) ներքին գնահատում,
- 2) արտաքին գնահատում:

Ներքին գնահատումն իրականացվում է հետևյալ երկու զուգահեռ կիրառվող ընթացակարգերով.

- 1) վերահսկման և ընթացիկ դիտարկման գործընթաց (այսուհետ՝ Մոնիթորինգ).
- 2) բաժնի գործունեության և ներքին աուդիտի կանոնակարգի պարբերական ինքնագնահատում (այսուհետ՝ Ինքնագնահատում):

3. ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ)

Վերահսկման և ընթացիկ դիտարկման (շարունակական) գործընթացը (մոնիթորինգը) իրականացվում է Բաժնի պետի կողմից աուդիտի իրականացման բոլոր փուլերի ընթացքում, մասնավորապես՝ գնահատվում է աշխատանքի կատարմանը մասնակցած աուդիտոր/ներ/ի աշխատանքի որակը յուրաքանչյուր աշխատանքի (ռազմավարական ծրագրի և տարեկան ծրագրի կազմում, աուդիտի աշխատանքային ծրագրի կազմում, առաջադրանքի իրականացում, աշխատանքների ամփոփում, հաշվետվությունների կազմում) համար:

Աշխատանքների գնահատման համար չափանիշներ են հանդիսանում՝ աշխատանքների որակը, պատշաճ մասնագիտական վերաբերմունքը, Ստանդարտներին համապատասխանությունը և այլն:

Մոնիթորինգն իրականացվում է զուգահեռ կիրառվող հետևյալ եղանակներով.

- Աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարի կողմից աուդիտորական առաջադրանքի իրականացման բոլոր փուլերի ընթացքում գնահատվում են աշխատանքային փաստաթղթերը, և վերահսկվում է կատարվող աշխատանքների համապատասխանությունն առաջադրանքով սահմանված խնդիրներին և ժամկետներին:

- Բաժնի պետի կողմից իրականացվում է աշխատանքների կատարման համար օրենսդրությամբ սահմանված ստուգաթերթերի և ընթացակարգերի կիրառման նկատմամբ հսկողություն, Քաղաքապետից, ներքին աուդիտի կոմիտեից և արտաքին աուդիտորներից կարծիքների, դիտողությունների և եզրակացությունների ստացման և դրանց վերաբերյալ հետագա աշխատանքների կազմակերպման գործողություններ:

- Մոնիթորինգի ժամանակ Բաժնի պետը պարբերաբար գնահատում է, թե գործող կանոնակարգով սահմանված նպատակները, լիազորությունները և պարտականությունները շարունակում են արդյոք նպաստել աշխատակազմի նպատակների իրականացմանը: Բաժնի աշխատանքների պարբերական գնահատման արդյունքում եզրակացություններ են տրվում ներքին աուդիտի գործունեության որակի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, ներքին աուդիտի գործունեությունը բարելավելու և ստանդարտներին համապատասխանեցնելու ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագրի վերաբերյալ: Այդ նպատակով մոնիթորինգի ընթացքում գնահատվում է յուրաքանչյուր փաստաթղթի և (կամ) կատարված գործողության համապատասխանությունն օրենսդրությամբ սահմանված պահանջներին և անհամապատասխանության դեպքում տրվում եզրակացություն ներքին աուդիտի գործունեությունը բարելավելու և ստանդարտներին համապատասխանեցնելու ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագրի վերաբերյալ:

- Ներքին աուդիտի որակի շարունակական և պարբերական գնահատումների համար կիրառվում են հետևյալ ստուգաթերթերը և հարցաշարերը.

- աուդիտի առաջադրանքի արդյունավետության գնահատման ստուգաթերթ,
- աուդիտի ենթարկվող միավորի կարծիքի վերաբերյալ ստուգաթերթ,
- Ստանդարտներին և Վարքագծի կանոններին համապատասխանության գնահատման ստուգաթերթ:

Աուդիտի առաջադրանքի արդյունավետության գնահատման ստուգաթերթը ուղղված է աուդիտի տեխնիկական կողմի գնահատմանը: Ստուգաթերթը պարտադիր ներառում է հետևյալ հարցերը.

- որքանով են առաջադրանքի շրջանակները և Բաժնի ծրագրերն անդրադառնում ռիսկային ոլորտներին և ռիսկերի նվազեցման գործառնություններին,
- առաջադրանքի փաստաթղթերի հստակությունը,
- որքանով են առաջադրանքի արդյունքներն արտահայտում շեղումների պատճառները:

Աուդիտի ենթարկվող միավորի կարծիքի վերաբերյալ ստուգաթերթը ներառում է աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի կարծիքը՝ ներքին աուդիտի գործընթացի մասին: Ստուգաթերթը պարտադիր ներառում է հետևյալ հարցերը.

- արդյոք նախքան առաջադրանքի մեկնարկն աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարը տեղեկացվել է առաջադրանքի նպատակների վերաբերյալ,
- արդյոք աուդիտորներն արձագանքել են աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի առաջարկներին,
- աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի տեղեկացվածության ապահովման աստիճանն առաջադրանքի կատարման ընթացքի մասին,
- հարցեր՝ ուղղված աուդիտի գործընթացի բարելավմանը և այլն:

Ստանդարտներին և Վարքագծի կանոններին համապատասխանության գնահատման ստուգաթերթի նպատակն է օժանդակել Բաժնի որակի գնահատում իրականացնողներին՝ Ստանդարտներին և Վարքագծի կանոններին, Բաժնի համապատասխանության գնահատման աշխատանքներում:

Մոնիթորինգի արդյունքում Բաժնի պետը ընտրում է այն թեմաները, որոնք պետք է դասավանդվեն շարունակական մասնագիտական վերապատրաստման ընթացքում:

Վերապատրաստման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունները հիմք են հանդիսանում Լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման թեմաներն ընտրելու համար:

4. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Բաժնի գործունեության և ներքին աուդիտի կանոնակարգի պարբերական ինքնագնահատման ընթացքում Բաժնի պետը գնահատում է Բաժնի գործունեությունը և դրա համապատասխանությունը Ներքին աուդիտի օրենսդրությանը: Ինքնագնահատումն Քաղաքապետարանում իրականացվում է ստուգաթերթերի և հարցաշարերի միջոցով:

Գնահատման ստուգաթերթիկները նպատակ են հետապնդում գնահատելու աուդիտի տեխնիկական կողմը: Դրանք պարունակում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխատանքային փաստաթղթերի պատրաստումը, առաջադրանքի արդյունքների և առաջարկությունների կարևորությունը, առաջադրանքի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

5. ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Շարունակական և պարբերական գնահատումներ իրականացնողներն այդ աշխատանքների ընթացքում հաշվետու են Բաժնի պետին և ուղղակիորեն նրան են ներկայացնում գնահատման արդյունքները:

Բաժնի պետի կողմից ստեղծվում է պարբերական գնահատումների արդյունքների վերաբերյալ հաշվետվական համակարգ, որն ապահովում է հուսալիության և օբյեկտիվության պահպանում:

Բաժնի պետը պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները ներկայացնել Քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին ու Լիազոր մարմնին:

6. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Արտաքին գնահատումների միջոցով գնահատվում է ներքին աուդիտի համապատասխանությունը Ներքին աուդիտի օրենսդրությանը, ինչպես նաև ներկայացվում են առաջարկություններ՝ ներքին աուդիտի գործունեության բարելավման վերաբերյալ: Արտաքին գնահատումներն իրականացվում են Լիազոր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր հինգ տարին առնվազն մեկ անգամ՝ ռիսկերի գնահատման հիման վրա կազմված ժամանակացույցին համապատասխան:

Արտաքին գնահատման նպատակն է պարզել.

- Բաժնի անկախությունը և անկողմնակալությունը,
- փաստաթղթերի հետ աշխատանքների ընթացքում գաղտնիության պահպանումը,
- ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրի մշակման ընթացքում ընտրված մոտեցումների արդյունավետությունը և նպատակահարմարությունը,
- Բաժնի աշխատանքի որակի ներքին վերահսկման համակարգը,
- ներքին աուդիտի գործունեության համապատասխանությունը Ներքին աուդիտի օրենսդրությանը և Վարքագծի կանոններին,
- Բաժնի գործունեության կատարողականը,
- Բաժնի գործունեության համապատասխանությունը ներքին աուդիտի կանոնակարգին:

Արտաքին գնահատումն իրականացվում է երկու եղանակով.

- 1) ամբողջական ուսումնասիրության (գնահատման),
- 2) Բաժնի ներքին գնահատման արդյունքների անկախ վավերացման:

Արտաքին գնահատման ամբողջական ուսումնասիրության դեպքում, կարող են գնահատվել աուդիտի բոլոր փուլերը, մասնավորապես.

- 1) ընդհանուր գործընթացների և մեթոդաբանության, ինչպես նաև ներքին աուդիտի կանոնակարգի ուսումնասիրման և գնահատման,
- 2) ներքին աուդիտի տարեկան և ռազմավարական ծրագրերի կազմման հիմքերի ուսումնասիրման,
- 3) ընտրանքային եղանակով ընտրված աուդիտորական առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերի ուսումնասիրման և գնահատման,
- 4) Քաղաքապետարանի, Բաժնի աշխատողների, ինչպես նաև Միավորների ղեկավարների հետ հարցազրույցների անցկացման,

5) Բաժնի կողմից լրացված ինքնագնահատման ստուգաթերթերի և հարցաշարերի ստուգմամբ, իսկ լրացված չլինելու դեպքում արտաքին գնահատողների կողմից դրանց լրացմամբ:

Արտաքին գնահատման իրականացման ավարտին արտաքին գնահատող խումբը կազմում և Բաժնի պետին են տրամադրում արտաքին գնահատման նախնական հաշվետվություն: Բաժնի պետը ներկայացնում է առաջարկություններ հայտնաբերված թերությունների վերացման և Բաժնի գործունեության որակի բարելավման ուղղությամբ: Այն դեպքում, եթե Բաժինը չի համաձայնում արտաքին գնահատողների կարծիքի հետ, այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահում արտաքին գնահատող խմբի ղեկավարին:

Բաժնի ներքին գնահատման արդյունքների անկախ վավերացումն ընդգրկում է.

1) փաստաթղթավորված ինքնագնահատման և մոնիթորինգի արդյունքների ներքին աուդիտի օրենսդրությանը համապատասխանության գնահատում,

2) արտաքին գնահատողի կողմից անկախ վավերացում:

Բաժնի ինքնագնահատման արդյունքների անկախ վավերացման եղանակով արտաքին գնահատումն իրականացվում է նախապես համաձայնեցված ծրագրով, որը կազմվում է Լիազոր մարմնի կողմից՝ ելնելով գործող Ներքին աուդիտի օրենսդրության պահանջներից:

Արտաքին գնահատման վերջնական հաշվետվությունը պարունակում է արտաքին գնահատող խմբի ընդհանուր կարծիքը՝ Բաժնի կողմից իրականացված առաջադրանքների Ներքին աուդիտի օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ: Արտաքին գնահատման արդյունքում տրվում է հետևյալ որակավորումներից մեկը՝ «Համապատասխանում է ստանդարտներին», «Չի համապատասխանում ստանդարտներին» կամ «Մասնակի է համապատասխանում ստանդարտներին»:

Բաժնի պետը արտաքին գնահատման արդյունքներից հետո արված առաջարկությունների հիման վրա պետք է վերանայի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը:

Բաժնի պետը յուրաքանչյուր տարին մեկ անգամ ներքին աուդիտի կանոնակարգով սահմանված ժամկետներում Քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին հաշվետվություն է ներկայացնում Որակի ծրագրի շրջանակներում իրականացված վերահսկման և ընթացիկ դիտարկման ու ինքնագնահատման արդյունքների վերաբերյալ: Այն դեպքում, երբ արտաքին գնահատման արդյունքում առկա են լրացուցիչ պլանավորված միջոցառումներ, ներկայացվում է նաև հաշվետվություն՝ դրանց կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Նշված հաշվետվության մեկ օրինակը ներքին աուդիտի տարեկան հաշվետվության հետ միասին ներկայացվում է Լիազոր մարմին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ